ՏՈՆԱՑՈՒՅՑ

1. Հունվարի 30, ուրբաթ օրը Սուրբ Սարգսի պահք, հունվարի 31-ին Տոն Սուրբ Սարգսի:
2. Փետրվարի 2 Տյարնընդառաջ: Սուրբ Պատարագ՝ ժամը 13:00
3. Փետրվարի 12 Վարդանանց տոն:
4. Փետրվարի 15՝ Բուն Բարեկենդան, Սուրբ Պատարագ, որի ավարտին տեղի կունենա Մոխրոց ժամը 15:30:
5. Փետրվարի 16-ից Ապրիլի 4՝ Մեծ Պահքի ժամանակաշրջան:
6. Մարտի 25՝ Սուրբ Կույս Մարիամի Ավետման տոն:
7. Մարտի 29՝ Ծաղկազարդ, Ուռօրհնեք և Դռնբացեք:
8. Ապրիլի 5՝ Սուրբ ՋԱՏԻԿ, Պատարգ՝ ժամը 15:30:
9. Ապրիլի 6՝ Օր մեռելոց: Պատարագ ժամը 13:00

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2015թ.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի

Մեր հասցեն՝ г. Москва, ул. Малая Грузинская д. 19/2
Հեռախոսներ՝
+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)
+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)
E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it
http:/armcatholik.ru

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 12-ին Վատիկանի Մայր տաճարում տեղի կունենա Սուրբ Պատարագ Եղեռնի Զոհերի հիշատակին: Պատարագին ներկա կգտնվի սրբազան հովվապետ Ֆրանցիսկոս պապը: Վատիկան մեկնել և Պատարագին մասնակցել ցանկացողները մինչև փետրվարի 1-ը կարող են դիմել վարդապետ Պետրոս Պետրոսյանին:

Ժողովրդապետություն

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

2 Տիմոթեոս 2,15-26

2 15եւ նրանց խօսքերը քաղցկեղի նման ճարակ են գտնում:
Նրանց թւում են Հիմենոսը եւ Փիղետոսը,16որոնք շեղուեցին
ճշմարտութիւնից եւ ասում են, թէ մեռելների յարութիւնը արդէն
իսկ եղել է. նրանք կործանում են ոմանց հաւատը: 17Բայց
Աստծու հաստատուն հիմքը կանգուն է մնում եւ ունի այս
կնիքը, թէ՝ «Տէրը ճանաչեց նրանց, որ իրն են». նաեւ՝
«Անիրաւութիւնից հեռու լինի ամենայն ոք, ով կրում է Տիրոջ
անունը»: 18Մի մեծ տան մէջ ոչ միայն ոսկեայ եւ արծաթեայ
անօթներ են լինում, այլ նաեւ՝ փայտեայ եւ խեցէ: Կան
այնպիսիք, որոնք պատուաւոր գործածութեան համար են, կան
էլ, որ ոչ պատուաւոր գործածութեան համար են: 19Եթէ մէկն
ինքն իրեն մաքրի այդպիսի բաներից, կը լինի պատուաւոր
անօթ՝ սրբագործուած եւ պիտանի իր Տիրոջը, պատրաստուած
ամէն բարի գործի համար: 20Երիտասարդական
ցանկութիւններից փախի՛ր եւ գնա՛ արդարութեան, հաւատի,
սիրոյ, խաղաղութեան եւ սրբութեան յետեւից նրանց հետ,
որոնք մաքուր սրտով աղօթում են Տիրոջ անունով: 21Բայց
յիմար եւ անմիտ վէճերից խուսափի՛ր. իմացի՛ր, որ դրանցից
կռիւներ են ծնւում: 22Այսպէս ուրեմն՝ Տիրոջ ծառան պէտք չէ որ
կռիւ անի, այլ բոլորի հանդէպ լինի հեզահամբոյր, ուսուցանող,
անոխակալ՝ 23հանդարտութեամբ խրատելու համար
հակառակողներին, որ թերեւս Աստուած նրանց
ապաշխարութիւն տայ, որպէսզի ճանաչեն ճշմարտութիւնը 24եւ
զգաստանալով՝ ազատուեն Սատանայի որոգայթներից, որոնց
մէջ բռնուած են նրա կամքը կատարելու պատճառով:

15Երբ Յիսուս իմացաւ, որ գալու են իրեն բռնել տանելու,
որպէսզի իրեն թագաւոր անեն, դարձեալ միայնակ դէպի լեռը
գնաց։ 16Եւ երբ երեկոյ եղաւ, նրա աշակերտները ծովեզերք
իջան։ 17Եւ նաւակ նստելով՝ գալիս էին դէպի ծովի միւս կողմը,
դէպի Կափառնայում։ Եւ երբ մութն ընկաւ, Յիսուս դեռ իրենց
մօտ չէր եկել. 18եւ ծովը հողմի ուժգին փչելուց փոթորկւում
էր։ 19Երբ շուրջ հինգ կամ վեց կիլոմետր թիավարելուց յետոյ
տեսան Յիսուսին, որ քայլում էր ծովի վրայով եւ նաւակին
մօտեցել էր, սաստիկ վախեցան։ 20Եւ նա ասաց նրանց. «Ես
եմ, մի՛ վախեցէք»։ 21Եւ ուզում էին նրան նաւակի մէջ առնել.
եւ նաւակը շուտով հասաւ այն տեղը, ուր գնում էին։

100
GENOCIDE

Խորհրդանշանի բացատրութիւնով

«Ճ» տառը հարիւր թուանշանին համազօր է՝ ըստ հայ դասական թուանշաններուն։
100 ցեղասպանութիւն կը նշանակէ 100 տարուան ցեղասպանութեան վնասները։
Կապոյտ գոյնը ոճիրի զոհերու իրաւունքի պաշտպանութեան խորհրդանիշն է։
Նարնջագոյնը կը խորհրդանշէ ցեղասպանութեան իրազեկումը։
Color chart: Blue for crime victims rights, orange/yellow for genocide awareness
Խորհրդանշանի հեղինակ՝ Ռոստոմ Գոյումճեան։

Կիլիկիայի՝ Մերսինի և Տյորթ-Յոլի, երեք որբանոցներից տարհանված հայ որբերի համար 1922 թ. սկզբին ՀԲԸ Միության Բեյրութի մասնաճյուղի ջանքերով վերակազմավորվեց Քելեկյան-Սիսուան որբանոցը:

Հայ երեխաներին Կիլիկիայից տարհանել է նաև դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենը, ով 1922 թ. հունվարին Քարեն Մարի Պետերսոնի հետ հայ որբերի մի մեծ խումբ փոխադրեց Բեյրութ::

1915-23 թթ. երիտթուրքերի և քեմալականների կողմից իրագործված հայկական կոտորածների հետևանքով որբացած հազարավոր հայ երեխաների սպառնում էր ֆիզիկական ոչնչացման վտանգ Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Այս մտահոգությամբ պայմանավորված՝ 1922 թ. փետրվարի 7-ին Հալեպում կայացավ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի աշխատակիցների և Սահակ Բ կաթողիկոսի կողմից վավերացված հայկական պատվիրակության (Ազգային միության, Քաղաքական ժողովի ներկայացուցիչների, Մարաշի և Այնթափի որբանոցների հոգաբարձուների) ժողովը՝ Առաջնորդական փոխանորդ Հարություն քահանա Եսայանի նախագահությամբ(9): Ժողովում քննարկվեց Թուրքիայում ստեղծված քաղաքական նոր իրավիճակը և որոշվեց Թուրքիայի հարավային և հարավարևելյան շրջանների որբանոցներում ապաստանած հայ որբերին տեղափոխել Սիրիա և Լիբանան, իսկ հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանների որբացած հայ երեխաներին՝ Հունաստան և Կովկաս: Թուրքիայի ներքին՝ կենտրոնական շրջանների՝ Կեսարիա, Կոնիա, Սեբաստիա, ինչպես նաև հյուսիսային շրջանների՝ Տրապիզոն, Սամսուն, քրիստոնյա որբերը՝ հայ և հույն ծնողազուրկ երեխաները, Ամերիկյան նպաստամատույցի որոշմամբ ցամաքային ճանապարհով փոխադրվեցին Կ.Պոլիս, իսկ այնտեղից՝ նավով Հունաստան և տեղաբաշխվեցին 13 որբանոցներում: Քայքայվող Օսմանյան կայսրության մյուս շրջաններից՝ Թրակիայից, որբերը տեղափոխվեցին Ռումինիա և Բուլղարիա, իսկ Իզմիրից և Բրուսայից՝ Մարիցա գետով՝ Հունաստան:

շարունակելի

Գոհար Խանումյան , Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

http://www.genocide-museum.am/

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐԻ, ՆՐԱ ՈՐԴԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ և ՏԱՍՆՉՈՐՍ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Մեր ազգի մեջ սիրելի և մեծ ժողովրդականություն վայելող սրբերից՝ Սբ Սարգսի տոնը այս տարի հայ եկեղեցին նշում է փետրվարի 15-ին: Սուրբ Սարգիսը Հայաստանին սահմանամերձ կապադովկյան Կեսարիայի Գամիրք գավառից էր, քաջ և առաքինի մի զինվորական:

Նա սիրում էր Աստծուն ամբողջ սրտով և Սուրբ Հոգով զորացած՝ինչ ձեռնարկում էր, Աստված հաջողությամբ էր պսակում: Քաջ զորականը շրջում էր իր իշխանության տակ գտնվող քաղաքներում, գյուղերում և քարոզում Ավետարանը, կործանում բագիններն ու մեհյանները: Երբ թագավորում էր Հուլիանոս Ուրացող կայսրը, Սարգիսն իր Մարտիրոս որդու հետ միասին ապաստան է գտնում Հայաստանում Տիրան թագավորի մոտ: Որոշ ժամանակ անց տեղափոխվում է Պարսկաստան:

Մեծ ընդունելության արժանանալով Շապուհ արքայի կողմից՝ նշանակվում է մի քանի զորագնդերի հրամանատար: Սբ. Սարգիսը իր որդու հետ միասին մեծ ազդեցություն են թողնում իրենց ենթակայության ներքո գտնվող պարսիկ զորքի վրա, որի համար և վերջիններից ոմանք քրիստոնեություն են ընդունում: Այս հանգամանքը հայտնի է դառնում պարսից արքունիքին, ուստի Սարգսին և իր որդուն պարտադրում են զոհ մատուցել արքայական մեհյանում: Սարգիսը մերժում է հրամանը, և հայր ու որդի համարձակ կերպով անարգում են կուռքերը: Այս բանի համար մոլեգնում են քրմերը և ոտնակոխ սպանում Սարգսի որդուն, իսկ Սարգիսը ձերբակալվում է, նետվում բանտ և այնուհետև՝գլխատվում: Իրեն հավատարիմ տասնչորս պարսիկ զինվորներ վերցնում են նրա մարմինը և զգեստավորում մաքուր հանդերձներով: Թագավորի հրամանով այս տասնչորս զինվորները ևս գլխատվում են: Ավանդության համաձայն՝հետագայում Սբ. Մեսրոպ Մաշտոցը սրբի մարմինը տեղափոխում է Հայաստան՝Կարբի (Աշտարակի մոտ), ուր եկեղեցի է կառուցում նրա անունով:

http://holytrinity.am/

ՊԱՏԵՐԱԶՄ, ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐՀԱՆՈՒՄ. 1922Թ. ՅԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԼԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՏԱՐՀԱՆՈՒՄՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով հազարավոր հայ երեխաներ որբացան և կրոնափոխ եղան: Նրանց մեծ մասը հարազատների կորստից հետո հայտնվեց անմարդկային պայմաններում՝ զրկվելով կենցաղային ամենատարրական պայմաններից: Որբերից շատերը մահացան սովի և այդ տարիներին մոլեգնող տարբեր համաճարակներրի հետևանքով: 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո հայ որբերին վերահաս կորստից փրկելու համար գործուն աշխատանքներ իրականացրեցին հայկական միությունները (Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ), Ազգային խնամատարություն), հայոց եկեղեցին (Ազգային առաջնորդարաններ), անհատները՝ հատկապես Հայկական լեգեոնի և հայկական կամավորական գնդերի զինվորականները, օտարերկրյա նպաստամատույց կազմակերպությունները (Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե, Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդ, Դանիացի տիկնանց միություն, Ռուսական Կարմիր խաչ, Ռուսաստանի քաղաքների միություն և այլն), ինչպես նաև միջազգային կազմակերպությունները (Կարմիր խաչ, Ազգերի լիգա): Հայ որբերին հավաքագրում էին Օսմանյան կայսության տարբեր հատվածներից, սիրիական անապատներից, Անդրկովկասից, մահմեդական ընտանիքներից, ազատագրում թուրքական պետական որբանոցներից:

Որբահավաք աշխատանքների շնորհիվ 1918-21 թթ. ընթացում հավաքագրվեց ավելի քան 77 000 հայ երեխա, որոնք տեղաբաշխվեցին Թուրքիայի, Կովկասի, Միջին Արևելքի հայկական և օտարերկրյա նպաստամատույց կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող պետական որբանոցներում:

Փոքր Ասիայում քեմալական (Ազգայնական) շարժման ծավալմանը զուգընթաց՝ 1921-22 թթ. Օսմանյան կայսրության որբանոցներում ապաստանած հայ երեխաների համար ստեղծվեց վտանգավոր իրավիճակ: Այն ավելի սրվեց Կիլիկիայում քեմալականների կողմից իրագործված հայկական կոտորածներից հետո, որի հետևանքով հազարավոր կիլիկիահայեր Այնթափից, Մարաշից, Հաճընից, Մերսինից և այլ վայրերից ստիպված էին լքել իրենց հայրենի բնակավայրերը: 1921 թ. վերջին՝ կիլիկիահայերի զանգվածային գաղթի ընթացքում, շուրջ 7 500 հայ որբ Կիլիկիայից տեղափոխվեց Հալեպ, Բեյրութ, Դամասկոս և Ալեքսանդրեթ, որոնց մեծ մասը հայտնվեց Ազգային խնամատարության և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության խնամակալության տակ: Փաստորեն, հայ որբերը երկրորդ անգամ էին տարհանվում Կիլիկիայից: Այս կապակցությամբ Հայոց ցեղասպանության վերապրող Հմայակ Գրանյանը գրում է. «Դեկտեմբերի 31-ի [1921 թ.- Գ.Խ.] առաւօտ, Միքայէլ Նաթանեանի հետ, Սիսուան եւ Քէլէկեան որբանոցներու բանալիները, կահ-կարասիներու ցուցակները եւ զոյգ շէնքերու ֆիզիքական նկարագրութիւնը … տարինք ֆրանսացի կառավարիչ՝ գնդապետ Քլեմանին յանձնեցինք եւ արցունքոտ աչքերով վերադարձանք որբերուն, առաջնորդելու համար երկաթուղագծին կայարանը եւ անկէ՝ Իսկենտերուն, վերջին անգամ ալ, մօտ հազար բերնով, երգելով. Ցանկամ տեսնել, զիմ Կիլիկիա… Աշխարհ ո՛ր ի՛նձ ետու՛ր արե՛ւ»…